

- եւ օրդուին, թէ դուք հպիք Մէհմէտն եւ տես-
 նուք զՄէքէն: Եւ այնպէս ճայն եւ աղաղակ
 50 լինի արանց եւ կանանց. եւ անդ է տեսանել
 զլաց եւ զգոչումն անօրինաց: Ձի թէ ի հնումն
 էր տեսանել զփառս եւ զպատիւ տապանակլին
 սրբոյ կամ յորժամ տանէր Դաւիթ ի տունն
 Արիաթարայ քահանայապետի, որ եւ առաւել
 55 պատուոյ արժանի էր. բայց սոցա աւելի տե-
 սաք. եւ թէ այն սէրն, հաւատն եւ յոյսն,
 զեղջն եւ փափագն, զոր ունին, եթէ առ Քրիս-
 տոս էր, երանելի եւս էր: Չոր տեսեալ հիա-
 ցաք ընդ մեծ սէրն ջերմեռանդ, զոր քրիս-
 60 տոնեայք բնաւ չունին զայն սէրն զէմ ճշմար-
 տին Քրիստոսի, որպէս նոքա ի սուտ մար-
 դարէն՝ կունտն: Եւ թէ որպէս նոքա հա-
 ճիքն, որ ի Մէքին դնալն որպէս յանձն առ-
 նուն զերկար եւ դժար, անջրդի ճանապարհի
 65 նեղութիւնն, որ քառսուն օր ջուր չկայ,
 պիտոր ըզտովք ջուր բառնան յամանս ապա-
 կեղէնս. եւ զի յոյժ չող է, բազում զեկան
 մսխեն, մինչ հասանեն. յոլով պատահարաց
 եւ նեղութեան դիպին. եւ զայն ամենայն առ
 70 սչինչ համարին, այլ լալով, ողբով, բոկ
 ոտամբք, զկուրծս բախելով եւ անպիտան հա-
 մարելով զանձինս տեսլեան կնտոյն: Եւ ա-
 մէն տարի աւելի քան զՍ—Մ Ո հոգի կ'երթայ
 ի Մեքան. զի իրեք ճանպիտով եւ իրեք պապաթ
 75 կ'երթան. մինն ծովով, եւ երկուսն ցամա-